ՀԵՍՈՂՐՈՂՆՈՂԿՈՂՆԵՐ

ԱՐՓԻՆԵ ՉԱՆԹԻԿՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆ

Հայը պիտի ապրի՛ հակառակ դահիճներուն, եւ հակառակ
իր առիւծի աչքին տակ բուսած կորեկին: Հայը պիտի ապրի
ժողովուրդներու սիրազօր մէկ օղակն ըլլալու համար...

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Հայ ազատամարտի պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ու նշանակությունն ունի 1880-1890-ական թվականների ազգային-ազատագրական պայքարը, որի ռահվիրաներից էր Սարգիս Կուկունյանը: Նրա կազմակերպած արշավանքը ազատագրական առաջին փորձն էր, որը վիթխարի ազդեցություն ունեցավ, ոգեորեց արեւելահայ եւ արեւմտահայ երիտասարդությանը՝ նրանց կտրակելով հայոց նվիրական հողը միացած եւ ամբողջացած տեսնելու երազանքը: Կուկունյան մարտիկի պայքարը, աքսորը եւ տառապալից կյանքը կարծես յուրատեսակ քարոզչություն դարձան ժամանակակիցների համար: Նա մի մասնիկն էր իր ծվատված եւ չարչարյալ ազգի, որի ազատագրումը հավատամք դարձրեց:

Սարգիս Մովսեսի Կուկունյանը (Ավետիսյան) ծնվել է 1866 թ. հունվարի 23-ին Նուխիի գավառի Նիժ գյուղում (այժմ՝ Ադրբեջանի Կուտակաշենի շրջանում): Նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում: Ապա Նուխիի գավառի դպրոցների թեմական տեսուչ Վահան վարդապետ Տեր-Գրիգորյանի օգնությամբ պատանի Սարգիսը 1877 թ. ընդունվում է Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարան[1]: Ընդունակ, ուսումնասիրասեր եւ շրջահայաց Սարգիսը Հոգեւոր ճեմարանի առաջադեմ աշակերտներից էր: Սակայն նա այդպես էլ չի ավարտում ճեմարանը[2]: 1883 թ. աշակերտական խռովությունների պատճառով Գեւորգյան ճեմարանից հեռացվում է շուրջ 80 աշակերտ, որոնց թվում էր վեցերորդ դասարանցի Սարգիսը (դեռ Ավետիսյան ազգանունն էր կրում): Նա Էջմիածնից գնում է Երեւան եւ փորձում ընդունվել Ուսուցչական սեմինարիա, սակայն չի հաջողում: Ապա տեղափոխվում է Թիֆլիս, մտնում զինվորական դպրոց. կարճ ժամանակ անց

1 Տես **Գաբրիէլ Լազեան**, Յեղափոխական դէմքեր. Մտաւորականներ եւ հայդուկներ, Հալէպ, 1990, էջ 285:

2 Տես «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան». 1890-1950, Բոստոն, 1950, էջ 272:

թողնելով այն՝ փորձում է ընդունվել Ներսիսյան դպրանոց: Սակայն Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսչությունը հեռացվածների մասին արդեն տեղեկացրել էր Ներսիսյան դպրոցի ղեկավարությանը: Սարգիսը որոշում է դիմել խորամանկության. խնդրագիր ներկայացնելով Կուկունյան ազգանունով՝ ընդունվում է Ներսիսյան դպրանոց եւ ուսանում Բաքվի «Մարդասիրական ընկերության» նշանակած ամսական 10 ռուբլի նպաստով: 1884 թ. ավարտում է Ներսիսյան դպրոցը[3]:

1884 թ. Սարգիս Կուկունյանը մեկնում է Բաքու եւ մասնավոր դասեր տալիս: Ապա որոշում է գնալ Պետերբուրգ եւ ընդունվել մանկավարժական ինստիտուտ: Մտադրությունն իրագործելու համար նա դարձյալ խնդրանքով դիմում է Բաքվի «Մարդասիրական ընկերությանը»: Վերջինս նկատում է, որ Սարգիս Կուկունյանն օժտված է մանկավարժին հատուկ կարողություններով եւ հմտություններով, ընդառաջում է, մանկավարժական կրթություն ստանալու համար ուղարկում Պետերբուրգ՝ նախապես հոգալով ուսման ծախսերը: Երիտասարդ Կուկունյանը մեկնում է Պետերբուրգ, սակայն հուսախաբ է անում իր մեկենասներին. ընդունվում է համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, իսկ երկու ամիս անց տեղափոխվում է արեւելյան լեզուների բաժին՝ որպես ազատ ունկնդիր[4]: «Մարդասիրական ընկերությունը», տեղեկանալով այս մասին, Սարգիս Կուկունյանին զրկում է կրթաթոշակից: Սակայն վերջինս չի հուսահատվում եւ սկսում է սեփական աշխատանքով իր կարիքները հոգալ:

Պետերբուրգում Ս. Կուկունյանը շփվում է ազատատենչ երիտասարդների հետ, ծանոթանում նրանց հեղափոխական գաղափարներին: 1880-ական թվականներին հայ ուսանողությունը կենտրոնացել էր Մոսկվա եւ Պետերբուրգ քաղաքներում: Պետերբուրգի հայ ուսանողները որդեգրել էին շեշտված ազգային-քաղաքական ուղղություն[5]. նրանք Երկիր (Արեւմտյան Հայաստան) մտնելու եւ հայերին թուրքական կեղեքիչ լծից ազատագրելու ծրագրեր էին մշակում:

Ս. Կուկունյանին հաջողվում է կարճ ժամանակահատվածում իր շուրջը համախմբել նվիրյալ երիտասարդների, սերտ կապեր հաստատել նշանավոր հայրենասեր, ժամանակի պետական-հասարակական ազդեցիկ գործիչ Կարապետ Եզյանի հետ: Վերջինս Կուկունյանի օգնությամբ կազմում է «Պետրոս Մեծի յարաբերութիւնները Հայոց հետ» վավերագրական ժողովածուն[6]:

Կարինի 1890 թ. եղերական դեպքերը ոտքի հանեցին ողջ հայությանը: Այս արյունալի իրադարձություններին հաջորդեց Գում Գափուի նշանավոր ցույցը՝ Կ. Պոլսում նույն թվականի հուլիսի 15-ին: Անհրաժեշտ էր համախմբվել, միավորվել եւ օգնել սահմանից այն կողմ գտնվող, սեփական հայրենիքում թուրք գազանից հոշոտվող եղբայրներին:

---

3 Տե՛ս «Յեղափոխական ալպոմ». Ազատագրական պայքարի յուշամատեան, Դ. շարք, թ. 1 (37), Պէյրութ, 1962, էջ 35:

4 Տե՛ս **Կարինե Եղիազարյան**, Սարգիս Կուկունյանը եւ նրա գլխավորած արշավանքը. «Պատմաբանասիրական հանդես», 2000, թ. 1, էջ 70:

5 Տե՛ս «Հայրենիք», Պոսթըն, 1923, թ. 5, էջ 27:

6 Տե՛ս **Գաբրիէլ Լազեան**, Յեղափոխական դէմքեր, էջ 286:

Սարգիս Կուկունյանը ձեռնամուխ է լինում ազգային-ազատագրական պայքարի կազմակերպմանը՝ նյութական միջոցներ է հայթայթում, զենք գնում, կամավորներ հավաքագրում. հայրենասիրական գործունեությամբ կարճ ժամանակահատվածում դառնում է ազատագրական պայքարի ակնառու գործիչներից[7]: Արշավախմբի գործունեության նպատակի մասին Ստեփան Ստեփանյանն[8] իր հուշերում գրում է. «Մենք պէտք էր երթայինք Հայաստան, խմբեր կազմէինք, ժողովուրդին զինէինք եւ երբ պատրաստ ըլլայինք ապստամբուէինք Սասուն, Մուշ եւ Վասպուրական: Մեր պահանջը պէտք է լինէր Բերլինի 61-րդ յօդուածի գործադրութիւնը»[9]:

1890 թ. օգոստոսին Թիֆլիսում հրավիրված «Սահմանադիր ժողով»-ին մասնակցում էին տարբեր խմբակների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, հասարակական-քաղաքական գործիչներ. որոշվում է հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող ուժերը միավորել եւ ստեղծել «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»[10]:

ՀՅԴ-ն ստեղծվում է այն ժամանակ, երբ արդեն իրենց գործունեությունն էին ծավալել հայրենասիրական խմբակներն ու առաջադեմ երիտասարդությունը: Թեպետ ժամանակաշրջանի եւ արմատական նշանակություն ունեցող իրադարձությունների թելադրանքով ՀՅԴ-ն փոխում է իր գործունեության մարտավարությունը, սակայն մարտական-հայդուկային եւ զինատար խմբերի տեղն ու դերը ազգային-ազատագրական պայքարում անփոխարինելի էր. Երկիր մեկնող մարտական եւ զինատար խմբերին հիմնականում զինվորագրվում էին ամենանվիրյալներն ու խիզախները:

Սարգիս Կուկունյանի խումբը կազմավորվում է Գում Գափուի ցույցից հետո՝ Հ. Յ. Դաշնակցությունից առաջ եւ նրանից անկախ:

Նորակազմ կուսակցության ղեկավարությունն սկսում է միջամտել խմբի նախապատրաստական աշխատանքներին. դաշնակցականները ձգտում էին խումբը համալրել եւ գործունեության իրատեսական ծրագիր մշակել: 1890 թ. սեպտեմբերին աշխատանքի անցած առաջին Վարչության կամ «Կենտրոնի» աջակցությամբ լրացվում է խմբի կազմը, ռազմամթերք ու պարեն է ձեռքբերվում: Սակայն որոշ ժամանակ անց տարաձայնություններ են սկսվում Սարգիս Կուկունյանի եւ ՀՅԴ Կարսի մասնաճյուղի միջեւ. նրանք հետագա գործունեության տարբեր ռազմավարություն էին որդեգրել[11]: Բանակցությունները որեւէ արդյունք չեն տալիս. Կուկունյանը հրաժարվում է ենթարկվել «Կենտրոնի» հրահանգներին՝ չընդունելով նրա գերակայությունը: Կոստանդին Խաչիսյանը, Սիմոն Զավարյանը փորձում են հարթել տարաձայնությունները, սակայն ապարդյուն: Ս. Կուկունյանին չի կարողանում մտափոխել նաեւ Իշխանը (Հ. Արղության). վերջինս

7 Տե՛ս «Յեղափոխական ալպոմ», էջ 37:

8 Ստեփան Ստեփանյանը (Ծերունի) արշավախմբի գլխավոր դերակատարներից էր եւ Կուկունյանին ճանաչում էր դեռեւս Գեորգյան ճեմարանում ուսանելու տարիներից. տե՛ս «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հտ. Ա., Պոսթըն, 1934, էջ 11:

9 Անդ, էջ 40:

10 Տե՛ս **Գ. Խուդինյան**, Սարգիս Կուկունյան. «Լրաբեր», 1989, թ. 11, էջ 29:

11 Տե՛ս «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 13:

փորձում է հիմնավորել, որ շտապողականությունը կարող է ողբերգական հետեւանքներ ունենալ, արեւմտահայությունը դեռեւս պատրաստ չէ ապստամբության, նախ պետք է ունեցած ռազմամթերքը անցկացնել Արեւմտյան Հայաստան, ստրիճանաբար զինել եւ նախապատրաստել ժողովրդին: Բոլոր հորդորներն անարձագանք են մնում: Այս մասին Ռոստոմը (Ստեփան Զորյան) նկատում է. «Սա մի փարերային հոսանք էր, ազնիւ, վեհ, ոգեւորիչ հոսանք, որի առաջն անկարելի էր առնել ոչ մի յորդորանքով, ոչ մի խելացի պատճառաբանութիւններով, ոչ մի սարսափելի ապագայի նկարագրութիւններով»[12]:

Անցնելով Կարս՝ Սարգիս Կուկունյանը ազատամարտիկներին բաժանում է փոքր խմբերի եւ տեղավորում հայկական գյուղերում:

1890 թ. սեպտեմբերին Կուկունյանի խումբը պատրաստ էր արշավանքի. Դաշնակցության Կարսի կենտրոնը դարձյալ առաջարկում է հետաձգել այն՝ նկատելով ցարական իշխանության առանձնահատուկ հետաքրքրությունն ու ձեռնարկումները: Իր արշավախմբով սահմանագլխին գտնվող Սարգիս Կուկունյանը հայտնվում է բարդ իրավիճակում. «Կենտրոնը» հրահանգում է Երկիր չանցնել, իսկ ազատամարտիկները պահանջում էին վճռական քայլերի դիմել եւ արագացնել արշավանքը[13]: Մերժելով ՀՅԴ առաջարկներն ու հիմնավորումները՝ խմբապետը որոշում է անցնել սահմանը: 1890 թ. սեպտեմբերի 22-ին մոտ 110 հոգուց (20 ձիավոր) բաղկացած խումբը[14] հավաքվում է Շահտեւան գյուղում, որպեսզի այնտեղից լեռներով անցնի թուրքական սահմանը: Երբ հասնում են սահմանագլխին, Ս. Կուկունյանը դիմում է իր մարտընկերներին. «Մենք շուտով կը մտնենք Թուրքաց Հայաստան, լաւ մտածեցէք, այնտեղէն վերադարձ չկայ: Մենք կ՚երթանք մեռնելու, որպէսզի ճանապարհ հարթենք գալիք կռուող շարքերուն համար: Թո՛ղ ոչ ոք ձեզմէ յոյս ունենայ, թէ կարող է ողջ մնալ: Ով որ ապրէ կը վհատի, թող այժմէն վերադառնայ...»[15]: Խմբի՝ սահմանն անցնելու մասին արդեն տեղյակ էին թուրքական կայազորի հրամանատարությունը եւ ռուս սահմանապահները: Հայ ազատամարտիկները զինված ընդհարումներ են ունենում քրդական ջոկատների եւ թուրք հեծյալների հետ: Ապա Խառ գյուղում, որտեղ հայ մարտիկները կանգ էին առել հանգստանալու, կոզակները շրջապատում են նրանց[16]: Ռուս զինվորներին հաջողվում է խումբը մի ողջ օր պահել շրջապատման մեջ. հայ մարտիկների դրությունը դառնում է օրհասական: Կոզակները խուզարկություններ եւ ձերբակալություններ են սկսում: Ստեփան Ստեփանյանի վկայությամբ՝ «Հարեւան քիւրտ գիւղացիները պակաս չէին մնար, որսորդական խումբի հետ բաժնուած՝ այս ու այն կողմ կ՚առաջնորդէին զինուորները եւ շներու պէս կ՚որսային մեր ընկերները»[17]:

12 «Յեղափոխական ալպոմ», էջ 53:

13 Տե՛ս **Գ. Ս. Խուդինյան**, Սարգիս Կուկունյան, էջ 31:

14 Սարգիս Կուկունյանի արշավախմբի թվական կազմության վերաբերյալ փվյալները տարբեր են. հուշագրողները տարբեր թվեր են վկայակոչում: Իսկ ըստ դատական ամբաստագրի՝ խումբն ունեցել 100 մարդ, այդ թվում 20 ձիավոր:

15 «Յեղափոխական ալպոմ», էջ 39:

16 Տե՛ս անդ, էջ 43:

17 Անդ, էջ 44:

Ս. Կուկունյանը մարտիկներին առաջարկում է առանց դիմադրություն ցույց տալու՝ իբրեւ ռուսահպատակներ հանձնվել. խմբապետը համոզված էր, որ ստեղծված իրավիճակում դա է միակ ելքը, ցարական իշխանությունն իրենց խիստ չի պատժի, չէ՞ որ իրենք պայքարում են ոչ թե Ռուսաստանի, այլ Թուրքիայի դեմ: Չանսալով Սարգիս Կուկունյանի հորդորներին՝ ոմանք, այնուամենայնիվ, դիմադրություն են ցույց տալիս եւ զոհվում, ոմանք՝ դիմում փախուստի, իսկ մյուսներին (այդ թվում եւ Ս. Կուկունյանին) ձերբակալելով՝ նետում են Կաղզվանի բանտը: Այս մասին Ստ. Ստեփանյանը դառնությամբ եւ սրտի մորմոքով պետք է հիշեր. «Ապա հրէշային տանջանքների ենթարկելով՝ մեզ տարին Կաղզուան: Հսկող սահմանապահ զինուորները նստած էին լաւ ձիերի վրայ եւ անխնայ քշում էին: Հէնց որ մէկն ու մէկը մեզանից քայլերը դանդաղեցնում էր, հայհոյում ու մտրակներով ծեծում էին: Աննկարագրելի չարչարանքներով հասանք Կաղզուան, ուր մեզ պահեցին 25 օր...»[18]:

Այսպիսով, Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքը ձախողվում է. հայ ազատամարտիկները չեն կարողանում իրագործել իրենց հայրենասիրական նպատակներն ու ձգտումները: «Կուկունեան ձեռնարկը, սակայն չարդարացրեց իր վրայ դրուած հոյսերը: Թէ՛ հրամանատարութիւնը, թէ՛ խմբի անդամները անփորձ ու անվարժ երիտասարդներ էին եւ ոգեւորութիւնից ու զոհաբերութեան պատրաստակամութիւնից զատ ոչինչ չունէին»[19]: Ցարական կառավարությունը դաժանորեն պատժեց դեպի Երկիր ուղղված առաջին արշավանքի մասնակիցներին:

1890 թ. սեպտեմբերի 25-27-ը արդեն ձերբակալվել էր Ս. Կուկունյանի խմբի 43 անդամ: Սակայն դատավարությունն սկսվում է երեք տարի անց՝ 1893 թ. ապրիլի 7-ին Կարսում[20], ուր տեղափոխվել էր Երեւանի նահանգային դատական ատյանն իր ողջ կազմով: Խմբի գործունեությունը բնութագրվում է իբրեւ քրեական, ազգային վրեժխնդրությունից դրդված զինված դիմադրություն իշխանությունների դեմ: Հայ ազատամարտիկների արդարացի պահանջները անտեսվում են, բոլոր փաստերը խեղաթյուրվում[21]: Ամբաստանյալները պահանջում են, որպեսզի դատավարության ընթացքում ներկայացվեն իրենց գործողությունների իրական, քաղաքական նպատակը եւ հայրենասիրական ձգտումները: Սակայն ցարական դատարանը գործը քննում է բացարձակ այլ տեսանկյունից. խմբի անդամներին ծանր մեղադրանքներ են ներկայացնում եւ փորձում են «հիմնավորել», թե նրանց գործողությունները ուղղված են եղել նաեւ ցարական Ռուսաստանի դեմ[22]: Դատավարությունը տեւում է գրեթե մեկ ամիս եւ ավարտվում է դատարանի 1893 թ. մայիսի 7-ին կայացրած վճռով. արշավախմբի անդամները մեղադրվում են որպես չարագործներ, մարդասպաններ եւ պետական իշխանության թշնամիներ[23]: Դատարա-

18 **Ծերունի**, Կուկունեան խմբի արշաւանքը. «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հտ. Ա., էջ 24:

19 «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 276:

20 Տե՛ս «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 25:

21 Տե՛ս «Մեսրոպ Վարդանեանի յուշերը Կուկունեանի արշաւանքի մասին». «Դրօշակ», Փարիզ, 1930, թ. 6-7, էջ 116:

22 Տե՛ս **Գաբրիէլ Լազեան**, Յեղափոխական դէմքեր, էջ 289:

23 Տե՛ս «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 26:

նի որոշումը դաժան եւ անարդար էր, այն ազգային-ազատագրական պայքարն արմատախիլ անելու նպատակ ուներ: Խմբապետ Սարգիս Կուկունյանին դատապարտում են 20 տարվա ազատազրկման, որից 7 տարին շղթայակապ, ապա՝ մշտական աքսոր: Ծանր էին նաեւ արշավախմբի մյուս անդամների պատիժները: Չնայած մարտիկները ամեն կերպ փորձում են բողոքարկել կայացված վճիռը, սակայն Երեւանի նահանգային դատարանի որոշումը թողնվում է անփոփոխ:

1895 թ. որոշ դատապարտյալներ՝ իբրեւ տկարակազմ, աքսորվում են Սիբիր, իսկ մնացյալները Ս. Կուկունյանի հետ միասին՝ Սախալին կղզի[24]:

Սախալինյան աքսորի դաժան տարիների մասին Ս. Կուկունյանը պատմում է իր «Վերջին օրերս Սախալինում» փոքրածավալ գրքույկում, որը լույս է տեսնում 1910 թ. Բաքվում: Աքսորի պայմաններում անգամ Ս. Կուկունյանը փորձում է օգտագործել իր գիտելիքները՝ Սախալինի ճապոնացիներին եւ աքսորյալների երեխաներին ռուսերեն սովորեցնելով: Որոշ ժամանակ անց կղզու գեներալ-նահանգապետ Լյապունովը նրան նշանակում է կառավարական տպարանի կառավարիչ: Սարգիս Կուկունյանը տպարանական գործին ծանոթ էր դեռ Պետերբուրգում ուսանելու տարիներից եւ բարեխիղճ աշխատանքով շատ կարճ ժամանակահատվածում կարողանում է լուծել իր առջեւ դրված բոլոր խնդիրները: Այստեղ նաեւ ճապոներեն է սովորում:

1904 թ. բռնկվում է ռուս-ճապոնական պատերազմը, եւ Ս. Կուկունյանը, որպես կամավոր, զորագրվում է ռուսական բանակին[25]: Երբ ճապոնացիները գրավում են Սախալինը, հայ մարտիկը հետաքրքիր դիպվածով փրկվում է դատապարտից. պատահաբար նրան ճանաչում է մի ճապոնացի սպա, որին Կուկունյանը ռուսերեն էր սովորեցրել: Սպան հայտնում է, որ Կուկունյանը աքսորյալ է եւ այդտեղ է գտնվում, քանի որ համարձակվել է պայքարել իր ազգի ազատության համար:

Ս. Կուկունյանը Սախալինում մնում է մինչեւ 1906 թ. հունիսը. Ռուսական կառավարությունը ներում է շնորհում 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին մասնակցած աքսորյալներին: 1906 թ. հոկտեմբերի 30-ին Կուկունյանը վերադառնում է հայրենի Նիժ գյուղ[26]: Սակայն այստեղ նրան հանգիստ չեն տալիս չարչարանքից ու սովից տկարացած գյուղացիների աղերսանքները: Սարգիսը պայքար է սկսում ներքին հարստահարիչների դեմ՝ փորձելով հայ շինականին տեր դարձնել իր արդար վաստակին: Նրա արդարացի պահանջները, գործունեությունը չէին կարող աննկատ մնալ: Մեծահարուստներն ու հողատերերը ձգտում էին խեղդամահ անել գյուղացիական բողոքի եւ ընդդիմության ցանկացած դրսեւորում, ամեն գնով ազատվել Ս. Կուկունյանից:

1910 թ. հոկտեմբերի 15-ին Նիժում տեղական տանուտերերի ցուցմունքով ձերբակալվում է 8 հոգի, որոնց մոտ նաեւ զենք է հայտնաբերվում[27]: Առանց որեւէ փաստարկի եւ լուրջ հիմնավորման, ցարական իշխանությունը ձերբակալվածներին որակում է «հեղա-

24 Տե՛ս անդ, էջ 27:

25 Տե՛ս **Ս. Կուկունյան**, Վերջին օրերս Սախալինում, Բաքու, 1910, էջ 91:

26 Տե՛ս **Գաբրիել Լազեան**, Յեղափոխական դէմքեր, էջ 289:

27 Տե՛ս **Կարինե Եղիազարյան**, Սարգիս Կուկունյանը եւ նրա գլխավորած արշավանքը, էջ 83:

փոխականներ»՝ նրանց գործունեությունը կապելով Կուկունյանի հետ: Սարգիս Կուկունյանը ձերբակալվում է Բաքվում 1910 թ. հոկտեմբերի 18-ին: Դատավարությունը տեղի է ունենում Գանձակում, եւ ցարական դատարանը նրան դատապարտում է 15 տարվա տաժանակիր աշխատանքի:

1912 թ. փետրվարի 4-ին ՀՅԴ-ն կազմակերպում է Սարգիս Կուկունյանի փախուստը Գանձակի բանտից[28]: Սակայն փախուստից ընդամենը 17 օր անց Նոր Բայազետ գավառի Նորադուզ գյուղում ոստիկանությունը ձերբակալում է Կուկունյանին եւ նրա երեք ուղեկիցներին: Գանձակից նրան տեղափոխում են Օրյոլ քաղաքի բանտը: Աքսորի ծանր եւ դաժան տարիները քայքայել էին Սարգիս Կուկունյանի առողջությունը. նա մեկ տարի է դիմանում Օրյոլի բանտային պայմաններին եւ 1913 թ. նոյեմբերի 26-ին թոքախտից կնքում է իր մահկանացուն: Հետագայում Գ. Խաժակը (Արծիւեան) Կուկունյան մարտիկի մասին մեծ ցավով գրում է. «Ծանր էր խաչդ, դու պիտի մեզի ճամբայ բանայիր Անյայտին մէջ, առաջին արահետը: Կեանքը անողորմ եղաւ դէպի քեզ, ինչպէս քո սիրած Ազգիդ: Դու եղար անոր մանրանկարը, ո՛վ Մեծ Տառապեալ»[29]:

Չնայած Սարգիս Կուկունյանի պայքարը ողբերգական ավարտ ունեցավ, սակայն ժողովուրդը արժեւորեց այս շարժումը որպես հաղթանակ, ապրեց ու ոգեւորվեց դրանով: Այս արշավանքը հայ ազատամարտի էջերում գրանցվեց լուսե տառերով եւ անջնջելի հետք թողեց՝ հաջորդ սերունդների համար դառնալով ներշնչումի աղբյուր: Ռուբենը (Տեր-Մինասյան) իրավամբ նկատում է. «...այդ խումբի արժէքը պէտք չէ որոնել իր մէջը, այլ պէտք է որոնել այն ազդեցութեան մէջ, զոր թողած է ժողովրդի հոգեբանութեան վրայ»[30]:

28 Տե՛ս «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 278-279:

29 **Գաբրիէլ Լազեան**, Յեղափոխական դէմքեր, էջ 291:

30 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ. Է., Թեհրան, 1982, էջ 114-115: